1896ի կուսակցական շրջանային ժողովին մէջ է, որ կ'որոշուի մեծ չափի վրայ արշաւանք մը կազմակերպել հարուածելու համար թշնամի: Մինչ այդ հայ Ֆետային մղած էր փոքր կռիւներ, որոնք միշտ պաշտպանական բնոյթ ունեցած էին: Այս անգամ վրէժխնդրական նպատակով յարձակողական պիտի անցնէր, նոյն ատեն բարձրացնելու համար հայ ժողովուրդի տրամադրութիւնները:

Երկար պատրաստութիւններ կը տեսնուին եւ առաջին անգամ ըլլալով մեծ թիւով հայդուկներ (253 հոգի) կը կազմակերպուին ունենալով կուռի ամէն գիւղերութիւն:

1897 Յուլիսի 25ին, Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ, հայդուկներու խումբը անհանկուկ կերպով կը յարձակի Մարդիկ կոչուած արիւնարբու գեղին վրան: Այս գեղն էր, որ Շարաֆ բէկի գլխաւորութեամբ կոտորած էր Աղբալը եւ Վանէն Պարսկաստան նահանջող քանի մը հարիւր հայեր:

Խանասորի արշաւանքն ետք, 1898 Ապրիլին Թիֆլիս տեղի կ'ունենայ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը, որուն կը մասնակցի Վարդան:

Վարդանի մէջ այլ նշանաւոր դրոժն այ եղաւ, 1905 - 1906 հայ - թաթարական կռիւներու ատեն, Ղարաբաղի պաշտպանութիւնը: Ան ընդհանուր վարիչն էր, իր հետ ունենալով ինչոն, Մաքոն, Սեպուհ, Համազասպ, Առիւծ Աւազը, Մուշեղը՝ կոտորի Հաճին, Ասլանը եւ կայծակ Առաքելը, որոնք արիւնալի կռիւներ մղեցին մասնաւորապէս Վարանդի, Սաչին, կարկառի, Ասկերանի եւ Շուշիի մէջ: Թաթարները գործարք էին այդ շրջաններում մէջ. առաջին անգամ էր որ այնքան ուժգին հակահարուած մը կը ստանային, Շուշիի մէջ հայերը կ'ունենային 40 սպանեալ եւ 68 վիրաւոր, իսկ թաթարները՝ շուրջ 500 սպանեալ եւ վիրաւոր:

Սահմանադրութեան ժամանակ Վարդան մնաց Մագնիսա (Իգմիրի շրջանը):

1915ի գարնան Գեռիի, Դրոյի եւ Համազասպի կամաւորական խումբերը միացուեցան Արարատեան գունդին մէջ, որուն ընդհանուր հրամանատարութիւնը ստանանք Վարդան: Ապրիլ 28ին գունդը մեկնեցաւ Երեւանէն, Մայիս 4ին անցաւ Չրղզլէն (թուրքերու սահմանագիւղերի վրայ) եւ նոյն օրը հասաւ Գրգըլ Տաղայի մօտերը՝ Պայազիտէն վան դաջող ճամբուն վրայ: Մայիս 1ին հայ զօրամասը, իրեւ գօր. Նիքոլայեւի յառաջապահ գունդը, գրաւեց Բեկրի Գայանը. Մայիս 14ին կրկին յարձակման անցնելով, յաջող օր գրաւեց Ծանիւ գիւղը եւ մտաւ Ալիւր գիւղը, ուր վանի հայդուկները, երկար պաշարումէ մը ազատուած, ողջագործեցաւ իր ազատարարներուն հետ:

Հայաստանի Հանրապետութեան շրջանին՝ Վարդան, ծանրաբեռուած իր անապահաս գաւակներու հոգով, կնոջը վաղաժամ մահուան հետեւանքով, քաշուած էր հանրային գործերէ եւ ազարակի մը մշակութեամբ կը զբաղէր: Խորհրդայնացումէն ետք, ոչ ոք լուր ունեցաւ իր մէջ: 1948ին տեղեկութիւն ստացուեցաւ, որ մեռած է 1943 Յունուար 2ին Երեւանի մէջ: Խորհրդային իշխանութեան օրով օրինապահ քաղաքացի մը եղած էր, իսկ մէկ գաւազն սպաննուած էր Բ. Աշխարհամարտի ընթացքին:

Վարդան պարկեշտ, խոհական եւ փափկասիրտ էր:

Սիրուտայի Սիմբոլիստիկ

ԴԱԽԻԹԻ ԱՐՉԱՆԸ ՓՐԿԵԼՈՒ «ԱՂՏՈՏ» ԳՈՐԾԸ

ՄԻԵԵԼԱՆՃԵԼՈՅԻ ՀՈՉԱԿԱԻՈՐ «ԴԱԽԻԹ»Ի ԱՐՉԱՆԸ ՄԱԲԵԼՈՒ ԱՅՈՒՆԱՆԸ ՓՈԹՈՐԻԿ ՍՏԵՂՍՈՒ Ե ԱՐՈՒԵՍԻ ԱՅՈՒՐԱԿԻ ՄԵՋ: «ՏՐ ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅԱՋ» ԵՒ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵՆ ԶԱՅՆ ՄԱԲԵԼՈՒ ՏԱՐԱԿԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ: ԱՐԴԵՕԵ ԱՆԻԿԱ ԻՐԱԿՄԵՒՍ ԿԱՐԻԸ ՈՒՆԻ «ԼՈՂԱՆՔԻ»...ՅԱՈԱԶԻԿԱՅ ՏԱՐԻ ԻՐ ԾՆՆԵԱՆ 500ԱՍԵԱԿԵՆ ԱՈԱԶ

Ֆլորանսի Փիցա տեղա Սիմբոլիստի վրայ Մի-բելանճեելոյի «Դախիթ»ի արձանին բացում է 5 դար ետք տեղի կ'ունենայ երկուսուսուրդ գեղեցկության այս կուռքը ժամանակի ակերտ փրկելու բանավէճ մը. արդեօք պէ՞տք է մարմարէ այս վիթխարի արձանը վերանորոգել՝ անոր սկզբնական կատարելութիւնը վերականգնելու համար, թէ պարզապէս պէ՞տք է մաքրել անոր վրայի մուրը: Արդեօք անիկա պէ՞տք է սորվի ապրիլ ակնածանք պարտադրող իր յառաջացած տարիքին պատճառած բիծերուն եւ արատներուն հետ:

Վերածնունդի ժամանակներու օրրանին մէջ ընդհանրապէս բուն վէճերու նիւթ է արուեստի յատկանշական դործ մը մաքրելու, վերանորոգելու կամ անհպելի ձգելու հարցը: Այսպէս, երբ անցեալ տարի Ֆլորանսի արուեստի գործերուն պատասխանատուները որոշեցին, թէ «Դախիթ»ի արձանը ուշադրութեան կը կարօտէր, անոնք զգուշութեամբ ձեռնարկեցին գործի եւ խոստացան միայն խնամքով մաքրել 4 մեթր բարձրութեամբ արձանը, որ 1973էն ի վեր կանգնած է Ֆլորանսի Ակադեմիային պատկերասրահին մէջ:

Գրեթէ անխուսափելիօրէն սուր բանավէճ մը ստեղծուեցաւ: Փորձառու վերանորոգող Ակնէս Փարոնչի, որ հրաւիրուած էր մաքրելու արձանը, իրաժարեցաւ անցեալ Ապրիլին՝ յայտարարելով, թէ պաշտօնագիտական ընդունուած վերանորոգութեան ձեւը շատ ծանր էր եւ կրնար վնաս պատճառել արձանին: Այժմ միջազգային 39 մասնագէտներու կողմէ ստորագրուած խնդրագիր մը կ'առաջարկէ առկախել որեւէ աշխատանք, մինչեւ անկախ մասնագէտներէ կազմուած յանձնախումբի մը կողմէ անոր վաւերացումը:


Ֆլորանսի արուեստի գործերուն վերակացուն՝ Անթոնիօ Փաուլուչի, որ վերջին խօսքը կ'ըսէ նման հարցերու մէջ, կը նախատեսէ, թէ «Դախիթ»ի արձանին մաքրութեան աշխատանքը ի վերջոյ պիտի սկսի Սեպտեմբերին, եւ արդէն նշանակուած է նոր վերանորոգող մը, որ պիտի փոխարինէ Փարոնչին: Միւս կողմէ, 15 ամիս առաջ Փաուլուչի ջնջեց Լէոնարտօ տա Վինչիի «Մոգերու պաշտամունքը» դեղանկարին վերանորոգութեան ծրագիրը՝ տեղի տալով միջազգային բողոքներու: Ծանօթ է, որ ան չի սիրեր գայթակղութիւնները:

Մակայն, առաջին «Դախիթ»ի արձանին պարագային, Փաուլուչի կը փորձէ մեղմացնել բանավէճին հակադիր մօտեցումներուն առթած լարուածութիւնը: Անոնցմէ մէկը կը պաշտպանէ «թաց» միջոցը, գոր առաջարկած է Ֆլորանսի Ակադեմիային տնօրէնը՝ Ծրանքա Ֆրանչեսկի, եւ «չոր» միջոցը, գոր նախընտրած էր Փարոնչի: «Այս երկու մօտեցումները նուրբ են եւ շատ մեղմ», կը բացատրէ ան: Պահպանուած լուրջ հարց մը չենք դիմադրուել: Մակերեսային մաքրութեան փոքր հարցեր կան, եւ զգայացունց ունին կայ: Մակայն կիրթեբը հրահրուած են Փարոնչիի,

Ֆրանչեսկի եւ անոնց համակիրներուն միջեւ: Անոնց հակաճառութիւններուն մէջ գիտութիւնն ու փորձառութիւնը յառաջ կը քշուին հատուածական նպատակներով:

Երբ անցեալ Սեպտեմբերին Փարոնչի գործի հրաւիրուեցաւ, կը թուէր, թէ ան խնայ անձն էր այս գործին համար: Ան գնահատանքի արժանացած էր Լորենզոյի մատրան մէջ Միքելանճեելոյի քանդակած Սեփոնիներու դամբարաններուն եւ արուեստագէտին պատկանող երկու այլ բարձրաքանդակներու՝ «Աստիճաններու Աստուածամօր» եւ «Պատրարագմ»ի վերանորոգութեան համար: Ակադեմիային մէջ շարժական աստիճանի մը վրայ բարձրացած՝ ան այցելուներուն դիմաց աշխատեցաւ երեք ամիս եւ պատաստեց «Դախիթ»ի արձանին թուային (տիճիթը) 360 պատկերները:

Փարոնչիի եզրակացութիւնը հետեւեալն էր. արձանը պէ՞տք է մաքրել նուազագոյն յարձակող, դակն միջոցով, որ «չոր» է եւ կ'ընդգրկէ մագէ նուրբ վրձիններ, բամպակէ սրբիչներ, ռետին եւ քարայծի (չամուս) մորթ: «Որովհետեւ «Դա-



Մասնագետներ 11 տարի է վեր կը լուսանկարեն «Դախիթ»ի արձանին ձեռքերն ու արատները:

լիթ»ի արձանը երկար ժամանակ բացօթեայ ցուցադրուած է, անոր ծակտիկները մեծցած են եւ փոշի կուտակուած է անոնց մէջ, կ'ըսէ Փարոնչի: Մակայն կարելի է դիտութեամբ մաքրել այս փոշին: Հարցը արձանին սկզբնական պատկերը վերականգնելը չէ, որովհետեւ անոր սկզբնական մակերեսն ոչ իսկ մէկ միլիմետր մնացած է»:

Այս մօտեցումը կը պաշտպանէ նաեւ Քոլոմպիայի համալսարանէն արուեստի պատմաբան եւ միջազգային «Արթուր» կազմակերպութեան նախագահ ձեյն Պէք, որ այժմ կազմակերպած է Փաուլուչիի աշխատանքը կասեցնելու արշաւը: «Դախիթ»ի արձանը մաքրելու կարիք չկայ, կ'ըսէ Պէք, որ երկրորդ բնակարան մը ունի Ֆլոր-

անսի մօտ եւ յաճախ պայքարած է իր կարծիքով՝ անտեղի վերանորոգութեան ծրագիրներու դէմ: Մակայն եթէ անպայման պէ՞տք է վերանորոգել արձանը, ապա պէ՞տք է ի գործ դնել ամէնէն նուրբ միջոցը, որ կարելի է: Ակնէսին մօտեցումը պարզապէս փոշի մաքրելու ծանր աշխատանք մըն է»:

Միւս կողմէ, Ֆրանչեսկի «թաց» մաքրութեան մօտեցումը հիմնուած է տեղեկագիրի մը վրայ, որ պատրաստուած է արուեստի գործերու վերանորոգութեան ոչ պետական հիմնարկի մը՝ ՕփիՖիսիօ տելէ Փիթերէ Տիւրէի գիտնականներուն կողմէ: Ամիսներ շարունակ քննութիւններ կատարելէ ետք այս գիտնականները եզրակացուցած են, թէ «Դախիթ»ի արձանին սպառնացող մեծագոյն վտանգը խոնաւութեան դէմ պայքարող գաճի (կիրի եւ աժուրի բաղադրութիւն մը) խաւ մըն է: Անոնք կ'առաջարկեն զայն վերցնել՝ թաց խիւս եւ զտուած ջուր օգտագործելով, ինչ որ պիտի մաքրէր նաեւ ծակտիկներուն մէջ կուտակուած փոշին:

Ակնէս Փարոնչիի մօտեցումը չի պակսեցներ գաճին քանակութիւնը, կ'ըսէ գիտնականներու խմբակին առաջնորդը՝ Մաուրօ Սեթչինի: Անիկա կրնայ արդիւնք տալ գեղագիտական առումով, սակայն չի մաքրեր գաճը: Նոյնիսկ եթէ վրձինով մաքրելու անոր առաջարկը մեղմ միջոց մը կը թուի ըլլալ, անիկա մեքենական գործընթաց մըն է: Ինչպէ՞ կիրարկել մեքենական միջոց մը, եթէ կարելի է խիւս գործածել»:

Ֆրանչեսկի աւելի կտրուկ ձեւով եւ ղղազըրուութեամբ կը յայտարարէ. «Ակնէս Փարոնչիի մօտեցումը եւ անոր օգտագործած նիւթերը բոլորովին անընդունելի են մեզի համար: Հարցը փոշին մաքրելն է, եւ ոչ՝ վրձինը ձեռքին արձանը մաքրելը»:

Ան կ'ըսէ, թէ միայն արձանին փոշին կարելի է առնել վրձինով, մինչդեռ «թաց» միջոցին կիրարկումը պիտի օգնէ, որ արձանը աւելի մօտենայ յաւիտեանական երիտասարդութեան այն կուռքին, գոր Միքելանճեելո ձգտած է ստեղծել:

Այսուհանդերձ Փարոնչի անքան խիստ կերպով ընդդիմացած էր արձանը մաքրելու «թաց» մօտեցումին, որ պատրաստ էր հրաժարելու այնպիսի պատուէրէ մը, որ իր ասպարէզին մէջ ամէնէն ուշագրաւ իրագործումը կրնար ըլլալ: «Խիւս օգտագործելու անպատեհութիւնը այն է, թէ անիկա միակտուր տեսք մը կու տայ արձանին», կ'ըսէ ան՝ նշելով, թէ մարմարը ունի իր բնական գոյնը եւ քանոններն ու շիջերը: «Հարցը չոր կամ թից մօտեցումները չեն, այլ՝ արձանին միակտուր եւ ոչ միակտուր տեսքը: Իմ մօտեցումս կը յարգէր մարմարին բոլոր նրբու-



Տարեկան միջին հաշուով շուրջ 1.2 միլիոն հոգի կ'այցելէ Ֆլորանսի ակադեմիան՝ տեսնելու համար Միքելանճեելոյի «Դախիթ»ը:

թիւնները»:

Անշուշտ այլ հարց է, թէ արդեօք «Դախիթ»ի արձանը մաքրութեան կը կարօտի: Գէթ այն պատճառով, որ անիկա երբեք չէ նկատուած կատարել մարմարի վրայ քանդակուած գործ մը: Քարարայի մօտակայ Ֆրանչեսկիի քարահանքերէն բերուած 5 մեթր բարձրութեամբ գանգուած մըն էր անիկա եւ 40 տարի լքուած մնացած էր Ֆլորանսի Մայր տաճարին փակին մէջ՝ կլիմայական փոփոխութիւններու ենթակայ, մինչեւ որ Միքելանճեելո օրոշած էր քանդակել գայն: Նոյնիսկ արձանը աւարտելէն ետք ան չորս ամիս յղկած ու փայլեցուցած էր մարմարը, մինչեւ արձանին բացումը՝ 1504ի Սեպտեմբերին:

Այնուհետեւ «Դախիթ»ի արձանը միշտ չէ, որ յարգալիք վերաբերումի արժանացած է: 1527ին անոր ալ լինել կոտորած է խռովութիւններու ժամանակ: Կիրի եւ աւագի ճեքով խառնուելով, որ օգտագործուած է թեւը վերամիացնելու համար, սակայն տեսանելի է: Ապա, երեք դար մուր ներծծելէ ետք, արձանը աւելի մեծ վնասներու ենթարկուած է 19րդ դարուն ի գործ դրուած կարկաստ երկու մաքրութիւններու պատճառով: 1810ին անիկա մոմով ծածկուած է: 1843ին մոմի խաւն ու Միքելանճեելոյի կիրարկած սկզբնական խաւը ամբողջութեամբ հանուած են ջրածնայ շերտական թթուով (հայտնաբերուած էր) փայտեցնելով:

Ամէնէն խելացի քայլը 1873ին «Դախիթ»ի արձանը գետեղեն էր Ֆլորանսայի Ակադեմիային գլխաւոր պատկերասրահին մէջ, ուր անիկա Ֆլորանսի մէջ զբօսաշրջիկներ ներգրաւող գլխաւոր վայրերէն է: Տարեկան միջին հաշուով շուրջ 1.2 միլիոն այցելու կը տեսնէ գայն: Մակայն 1991ին իտալացի անհատասարակչու արուեստագէտ մը՝ Փիերօ Քանաթա մուրճով վրէժց «Դախիթ»ի արձանին ձախ ոտքին երկրորդ մատը: Մասնագէտներ նոր մատ մը ձեւաւորեցին փշրուած մարմարին եւ գաճի խառնուրդով:

«Դախիթ»ի արձանին վերանորոգութիւնը այժմ պիտի յանձնուի Սիւեցիա Փարնիկոնտիի, որ յօտարած է կիրարկել «թաց» միջոցը: Ֆրանչեսկի համաձայն, «Դախիթ»ի արձանին վերանորոգութեան աշխատանք պէ՞տք է տեսնէ 7էն 8 ամիս: Զրօսաշրջիկներ պիտի կարենան դիտել մաքրութեան աշխատանքը:

ՕփիՖիսիօ տելէ Փիթերէ Տիւրէ հիմնարկին պատասխանատուն կ'ըսէ, թէ արձանը օգնութեան կարիքը ունի: «Զայն մաքրելը չի նշանակեր արձանը ճեղմակցել կամ գեղեցկացնել: Անիկա թերեւս կրնայ ճեղմակիլ եւ գեղեցկացնել, սակայն նպատակը այդ չէ: Մեր նպատակն է մաքրել այն, ինչ որ վնաս կը պատճառէ արձանին»:

Աշխարհահռչակ աստղեր, ինչպէ՞ս Սիւեցիա եւ Մէլ Կիպրի, կը մտածեն մինչեւ 500 հազար փառանքի նուիրատուութիւններ կատարել ծրագրին գործադրութեան համար, որուն նիւթական ծախսերը ցարդ մեծ մասամբ կը հոգայ հոլանտացի բարերար մը:

Իտալիոյ պետութիւնը իր զօրակցութիւնը յայտնած է Ֆրանչեսկի մօտեցումին եւ կանաչ լոյս տուած է աշխատանքներուն վերականգնումին: Ինչ կը վերաբերի արուեստի միջազգային մասնագէտներու կողմէ ուղարկուած խնդրագրերին, Ֆլորանսի արուեստի գործերուն վերակացուն կ'ըսէ, թէ՝ «իտալացի կարիքը չունին ռեւէ մէկուն ցուցմունքին»:

«Արուեստի գործերու վերանորոգութեան մարզին մէջ մեք լաւագոյնն ենք միջազգային մակարդակի վրայ: Հարկ չկայ աղմուկ բարձրացնելու՝ հսկողութեան տակ փոշի առնելու թեթեւ աշխատանքի մը համար», կ'ըսէ ան: Մաքրութեան աշխատանքը մանրակրկիտ կերպով կը ծրագրուէր 11 տարիէ ի վեր, որուն ընթացքին մասնագէտներ թուային (տիճիթը) արհեստագիտութեամբ կը նկարէին Միքելանճեելոյի զլուկ գործոցին ճեղքերն ու արատները:

(Հ.Մ.Ս.Դ.Ր.Ա.Ր.Ա.)

ՌԱՃԱՅՅԵԼԻ ԳԵՂԱՆԿԱՐԸ ՊԱՏԵԼՈՒՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԲՐԻՏԱՆԱՑԻԵ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԱՐՈՒԵՍԻ ՃԱՌԱՎՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԱՏԵԼ ԻՐԵՏՑ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԵՒ «ՏԻ ՕՊՂԸՐՎԸՐ» ԿԸ ԳՐԵՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՉԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱԿԻՆ ՏԱԳԱՊԻՆ ՄԱՍԻՆ

Ռաֆայէլի «Աստուածամայրը եւ մանուկը» գեղանկարը, որ ծանօթ է նաեւ «Մատոնա աֆ տը փինքս» անունով, 1922-ին ի վեր Բրիտանիոյ Ազգային պատկերասրահին փոխ տրուած է Նորթ-թամպլըթի զուգահեռ կողմէ:

Բրիտանիոյ ժառանգութեան Վիճակահանուածութեան Հիմնադրամը Չորեքշաբթի օր ժողով մը գումարեց՝ որոշելու համար, թէ արդեօք պէ՞տք էր 11.5 միլիոն փառանք յատկացնել Ռաֆայէլի գեղանկարը Բրիտանիոյ մէջ պահելու համար: Ժողովին արդիւնքը յաղթանակ մը եղաւ Բրիտանիոյ Ազգային պատկերասրահին համար:

Նորթթամպլըթի զուգահեռ որոշած է միայն 30 սմ. երկայնքով եւ 22.5 սմ. լայնքով գեղանկարը 29 միլիոն փառանքի վաճառել Գալիֆորնիոյ Փօլ Կէթի թանգարանին:

Մակայն Բրիտանիոյ Ազգային պատկերասրահին կողմէ գայն Բրիտանիոյ մէջ պահելու արշաւ մը ծայր տուած է, մինչ Բրիտանիոյ պետութիւնը այս տարուան սկիզբը ժամանակաւոր արգելք մը դրաւ գեղանկարը երկրէն դուրս հանելու վրայ:

Ազգային պատկերասրահին մէկ բանբերը գեղանկարը կը նկարագրէ իրեն «ենթաշրջաբար մեծ վարպետին ամէնէն յատկանշական գեղանկարը, որ կը պատկանի անհատի մը՝ Բրիտանիոյ մէջ»:

Մակայն դուքսը եւ Նորթթամպլըթի կալուածներուն խնամակալները, որոնք պատասխանատու են շարք մը կառոյցներու եւ թանգարանի գեղանկարներու հսկողական հաւաքածոյի մը, կ'ըսեն, թէ Բրիտանական ժառանգութիւնը պիտի օգտուի, եթէ գե-

ղանկարը երկրէն դուրս երթայ: «Իտալական այս յատկանշական գեղանկարը Անգլիոյ հասած է 150 տարի առաջ: Աշխարհահռչակ գեղանկարին վաճառքն պիտի գոյանայ հիմնադրամ մը, որ նիւթական արդիւնք պիտի ապահովէ հաւաքածոներու, արխիւներու, գրադարաններու եւ ազգային ժառանգութիւն համարուող շէնքերու կասեցնելու արշաւը»:

«Գեղանկարին գեղարուեստական արժէքը երբեք կասկածելի չէ: Թէ եւ անիկա գեղեցիկ գործ մըն է, սակայն ոչ մէկ կայ ունի Բրիտանիոյ մշակութային ինքնութեան հետ, կը գրէ «Տի Օպլըվըր»:- Անիկա կը պատկանի վերնախաւի մը, անդերբարոյական մշակոյթի մը, որ իր ազդեցութիւնը ունեցած է Բրիտանիոյ գեղարուեստական զարգացումին վրայ, սակայն զայն պէ՞տք է պաշտպանել անհատական եւ ոչ հանրային հիմնադրամներով: Ի վերջոյ «Աստուածամայրը եւ մանուկը» գեղանկարը զժողովը թէ ազգային գանձ մը ըլլայ: Այս երկրին մէջ երկար եւ տխրահռչակ է պատմութիւնը այն մեծահասարակութեան սպաննուածներուն, որոնք մշակութային հիմնադրամներ կը փորձեն կորզել պետութենէն»:

Բրիտանիոյ Ազգային պատկերասրահը սկիզբը 20 միլիոն փառանք խնդրած էր ժառանգութեան Վիճակահանութեան Հիմնադրամէն, սակայն վերատեսուծութեան ենթարկած էր իր պահանջը՝ սուրբերու առնչուող օրէնքներ վերատեսուծութեան ենթարկելէ ետք:

Ռաֆայէլ «Աստուածամայրը եւ մանուկը» գեղանկարը ամբողջացուցած է Ֆլորանսի մէջ, 1507-ին 1508ի միջեւ: Միայն 10 տարի առաջ ստուգուեցաւ, թէ անիկա իրապէս Ռաֆայէլի գործն է:



Բրիտանիոյ Ազգային պատկերասրահը իր գոհարները մեկը կը համարէ Ռաֆայէլի գեղանկարը, որ կը փայտալուծուի իր աշխարհի ամենէն գեղեցիկ Աստուածամոր եւ մանուկ Յիսուսի գեղանկարները մեկը:

Պատկերասրահին պատասխանատուները կը հաւատան, թէ կրնան յաւելնել 9.5 միլիոն փառանք ապահովել եւ գեղանկարը պահել Բրիտանիոյ մէջ: Յարդ պատկերասրահը նիւթական արդիւնքն ապահոված է այցելուներու նուիրատուութիւններէ, ինչպէս նաեւ՝ անհատական նուիրատուներէ: Ազգային Արուեստի Հաւաքածոներու Հիմնադրամը 400 հազար փառանք ապահովեցած է:

Ռաֆայէլի գեղանկարը կը համարուի իտալական վերածնունդի շրջանի ամէնէն փայտալուծուած փոքր գեղանկարներէն մէկը, որ կը պատկերէ Աստուածամայրն ու Յիսուսը: Կը կարծուի, թէ Ռաֆայէլ «Աստուածամայրը եւ մանուկը» գեղանկարը ամբողջացուցած է Ֆլորանսի մէջ, 1507-ին 1508ի միջեւ, նախքան Հոմմ երթալը՝ հոն աշխատելու համար:

Գեղանկարը Բրիտանիայէն դուրս հանելու արգելքին պայմանաւորմամբ կ'աւարտի Օգոստոս 27ին, երբ պետական նախարար մը արտօնագիր պիտի տայ գայն դուրս հանելու, եթէ բաւարար գումար չհաւաքուի գայն Բրիտանիոյ մէջ պահելու համար:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՍՐԱԴԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՀԳ. ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Տեսչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ արդէն իսկ սկսած է Դպրեվանքի կրթական յառաջիկայ ՀԳ. (74րդ) տարեշրջանին համար նոր սաներու արձանագրութիւնը:

Մուտքի արձանագրութիւնն ու քննութիւնը տեղի պիտի ունենան Երեքշաբթի, 15 Յուլիսէն մինչեւ Հինգշաբթի, 24 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 9:00-12:30, Մայրավանքէն ներս, Անթիլիաս:

Ներկայացող թեկնածուները պարտին ըլլալ միջնակարգի եւ երկրորդական ուսման ընթացքին մէջ եղողներ, աւարտած նախակրթարանի ուսուցիչ եւ ամբողջացուցած առնուապէս 13-14 տարիքը: Քաջակերելի են յատկապէս մեծ տարիքով տղաքը՝ համալսարանական կրթութիւն ստացած կամ այդ հանգրուանին մէջ եղողները:

Ներկայացող թեկնածուները պարտին իրենց հետ բերել. -

- 1.- Բարի վարուց վկայագիր՝ ծխատէր քահանային
 - 2.- Հաստատագիր՝ դպրոցի ծխատէր քահանային
 - 3.- Վերջին տարուան վիճակագրոյցը
 - 4.- Բժշկական վկայագիր
 - 5.- Անձնաթուղթի լուսապատճէնը
 - 6.- Երկու գունատր լուսանկար
- Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ Դպրեվանք ուղարկեն ուսումնապէս փայլուն, Հայ Եկեղեցւոյ ու ազգին ծառայելու ատակ եւ կարող կաւակներ:

ՏԵՏՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՊԵՅՐՈՒԹ ԸԵՍԱՊ

ՈԱԷԼ ԵԼԼԱՂԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ծաբաթ, 26 Յուլիս 2003, Ջալալի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եւ Ըստապի Ս. Միքայէլ եկեղեցիներուն մէջ, երեկոյեան ժամը 7:00ին:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5496 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՐՏՆԵՐ ԵՎ ՈՒՐԱՇԻՆՆԵՐ

1. Ծաղիկ մը - Շատակներ:
2. Աներես - Կանաչորակ պատուական քար:
3. Աղջիկ - Անորոշ դերանուն - Դրկից գիրք:
4. Մեկուսի - Նախամայր - Որոգայթ:
5. Երկուշաբթի - Ջրեւանդ - Յուցական ածական:
6. Միսաք Մեծարեցի երկերէն - Ցաւի ճիչ:
7. Իրերայաջորդ տանը - Նգովեալ:
8. Եզր, ծայր - Կրկնուած բաղաձայններ:
9. Որսի կենդանի - Որպէս:
10. Ուռնակ - Լիբանանեան արարատառ օրաթերթ:
11. Փոքրացնող մասնիկ - Բաղաձայն:

ԹԻՒ 5495
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ն	Ա	Գ	Ա	Մ	Գ	Մ	Ս	Ս	Ս
2	Ա	Գ	Ա	Մ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

ՏՆՕՐԵՆ ԿՈՒՉՈՒԻ

Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդը, Ազգային Երկրորդական վարժարանի մը համար կարիքը ունի տնօրէնի մը, որ պարտի օժտուած ըլլալ համալսարանական հետեւեալ վկայականներէն մէկով.

- 1.- Մագիստրոս դպրոցական վարչագիտութեան (MA in School Administration),
- 2.- Մագիստրոս Ուսումնական Գիտութեան (MA in Education) եւ երկրորդական վարժարանի ուսուցչական փորձառութիւն,
- 3.- Մագիստրոս Երկրորդական վարժարանի ուսուցչական փորձառութիւն,
- 4.- «Իժազէ Թախիմի» կամ «Իժազէ Ժամիի» եւ երկրորդական վարժարանի ուսուցչական փորձառութիւն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՂ

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամահոշներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	28,85 - 29,00 Լ.Ն.
Քուէթեան տինար	5028,00 - 5053,00 Լ.Ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 Լ.Ն.
Պահրէյնեան տինար	3986,00 - 4011,00 Լ.Ն.
Վ.Մ. Էմիրութեան տիրիամ	410,75 - 412,75 Լ.Ն.
Քաթարեան տիրար	413,75 - 415,75 Լ.Ն.
Սէուտական տիրար	402,00 - 404,00 Լ.Ն.
Օմանեան տիրար	3895,00 - 3920,00 Լ.Ն.
Եգիպտական կինէ	238,00 - 248,00 Լ.Ն.
Անգլիական սթերլին	2430,00 - 2440,00 Լ.Ն.
Չուլիցերիական ֆրանք	1115,00 - 1120,00 Լ.Ն.
Թրքական լիրա	105,25 - 105,75 Լ.Ն.
Կիպրական փաունտ	2930,00 - 2955,00 Լ.Ն.
Ճափոնական հապար եէն	12,55 - 12,65 Լ.Ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 Լ.Ն.
Քանադական տոլար	1077,00 - 1082,00 Լ.Ն.
Աւստրալիական տոլար	996,00 - 1001,00 Լ.Ն.
Եւրօ	1729,00 - 1739,00 Լ.Ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	139,000 - 144,000 Լ.Ն.
Իրանեան մէկ ոսկի	125,000 - 130,000 Լ.Ն.
Օսմանեան մէկ ոսկի	115,000 - 120,000 Լ.Ն.
Մեքսիքական փէսսո	664,000 - 684,000 Լ.Ն.

Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 17,300,000 - 17,750,000 Լ.Ն.

Մէկ օնս ոսկի 359,00 - 359,50 \$

Մէկ օնս արծաթ 5,03 - 5,05 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1468 - 1.1475
Քանադական տոլար	1.3953 - 1.3963
Չուլիցերիական ֆրանք	1.3501 - 1.3511
Ճափոնական եէն	119.02 - 119.12
Մէկ սթերլին	1.6116 - 1.6126

Մէկ տոլար 560 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գինի Ա. ճշդում	Գինի Բ. ճշդում
Ա. կարգ 4 6/8	4 7/8
Բ. կարգ 5	5

ԼՈՒՄՆԱՓՈՒ ԱԵԾՄԱՆԵԱՆ ՀԵՂ. 01-252852

ՆՆՅՆՆԵՐ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Երէ կրնաք, այս իրիկուրէն սկսեալ գացեք դէպի անսովոր վայր մը: Խնդրեցեք բարեկամ մը, որ ձեզի միանայ: Օրը յարմար է որոշումներ իրագործելու:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Երէ արժեքաւոր ուսարկայ մը կամ կալուած մը ծախու հանած էք, լաւ գինով պիտի կարենաք գայն վաճառել: Սակայն ձեր գանձած գումարը խնայողութեան համար պահեցեք:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Սովորական շաբաթ մը ետք, այսօր պիտի փոխեք աշխատանքի ձեր ձեռքը եւ ձեր գաղափարները: Դուրս ելեք ձեր շրջապատէն, ձեր շուրջիցները պիտի ուրախանան ձեզի հետ, պիտի հիանան ձեզի:

ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Ձեզի մօտիկ անձ մը դուրս պիտի բերեք իր դժուարութիւններէն: Կարգադրութիւն մը պիտի ընէք՝ հատապարտելով անոր, որ ամէն ինչ կարգին է, մտահոգ չլինի ձեզի:

ԱՌԻԻՒՔ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Հրաւիրեցեք ձեր բարեկամները, բով բովի բերեք գանձեր, որպէսզի անցընէք միասնաբար գուարք երեկոյ մը: Օրը յարմար է այլ ծրագրերէն եւս յաջողցնելու:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Երէ անցործ էք եւ դիմած էք աշխատանք մը ունենալու, մի մերժեք այն առաջարկը պատրուակելով, թէ այդ մնայուն չէ, այլ՝ ժամանակաւոր: Գոհացեք առ այժմ:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Կը կարծեք, թէ մարդիկ ձեզ չեն հասկնար, անհասկընալի կը բուրիք, բայց շուտով պիտի հաստատեք, թէ բոլորն ալ ընդունած են ձեր տեսակետը, համաձայն են ձեզի:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Երէ աշխատանքի մը սկսիք, կիսատ մի թողուք, այլ կատարեցեք անոր մանրամասնութիւնները, որպէսզի կարենաք յաջողութիւն գտնել եւ նւթապէս վարձատրուիլ:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Երբ ձեր կողակիցին կամ ձեր ընկերոջ հետ հարց մը արձարձեք, եղեք համաձայն տուեալ հարցին շուրջ: Ձեր վերաբերումը բոլոր ըլլալ գիտակից եւ սիրալիր:

ԱՅԾԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Աշխատանքի մարդկին մէջ ձեզի ցոյց պիտի տան, թէ դուք ո՞ր մարդիկն մէջ իրապէս կարող էք: Ձեր վերաբերումը բոլոր ըլլալ գիտակից եւ սիրալիր:

ՇՈՒՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեր մարմինը պէտք ունի նկունութեան, հետեւաբար օրուան ընթացքին 15 վայրկեան ժամանակ գտեք ձեր մարմինը բերելու մարզանքով: Ասիկա կարեւոր է:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ձեր ընտանիքին բոլոր անդամները իրարու միացընելու դժուարութիւնը պիտի ունենաք: Այս մասին լուրջ աշխատանք կը տանիք, բայց կարելիութիւն չի ստեղծուիլ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒԱՏՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՄ / ԵՐԳԱՀԱՆԳԵՄ

ՌԷԿԻ ԵՐԳԱՐՈՒԵՍԻ ԱՍՏՂԵՐԸ ՇԷԿԻՆՆԱՀԱՏԱԿԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ



Ռէկի երգարուեստի աշխարհահռչակ երգիչ Շէկի, որ մեծ ժողովրդապահ կարիք ունի կր վայելէ պատանիներու ու ընտանիքներու սիրտը, այսօր երեկոյեան ժամը 8:00էն սկսեալ պիտի թնջացնէ Պէյրութի Նահատակացի հրապարակը: Լիբանանեան միակ էլոյթով Պէյրութ այցելած երգիչը այսօր իր կընոյթներուն համար առաւելագոյն թիւով ներկաներ:

Մեծնոյ քանի մը տարիներուն իր արագ եւ զօրաւոր կընոյթ ունեցող երգերով Շէկիի երգարուեստի աշխարհին տիրապետող երգիչը ցարդ հրապարակած է տասնեակ մը ձայնագրեր, որոնք ծախուած են եւ պարողներու 25 հոգիէ բաղկացած խումբ մը: Նշենք, որ Շէկիի էլոյթը իր հանդիսատեսներուն պիտի տրամադրէ միայն ոտքի մնալու տեղեր՝ ներգրաւելու համար առաւելագոյն թիւով ներկաներ:

Մեծնոյ քանի մը տարիներուն իր արագ եւ զօրաւոր կընոյթ ունեցող երգերով Շէկիի երգարուեստի աշխարհին տիրապետող երգիչը ցարդ հրապարակած է տասնեակ մը ձայնագրեր, որոնք ծախուած են եւ պարողներու 25 հոգիէ բաղկացած խումբ մը: Նշենք, որ Շէկիի էլոյթը իր հանդիսատեսներուն պիտի տրամադրէ միայն ոտքի մնալու տեղեր՝ ներգրաւելու համար առաւելագոյն թիւով ներկաներ:

Մեծնոյ քանի մը տարիներուն իր արագ եւ զօրաւոր կընոյթ ունեցող երգերով Շէկիի երգարուեստի աշխարհին տիրապետող երգիչը ցարդ հրապարակած է տասնեակ մը ձայնագրեր, որոնք ծախուած են եւ պարողներու 25 հոգիէ բաղկացած խումբ մը: Նշենք, որ Շէկիի էլոյթը իր հանդիսատեսներուն պիտի տրամադրէ միայն ոտքի մնալու տեղեր՝ ներգրաւելու համար առաւելագոյն թիւով ներկաներ:

ԱՅՍՕՐ

Պէյրութի փառատօն. «Ուեսթ սայն սթրիթ» երաժշտական թատերաստի երկայացում, ժամը 21:00ին, մինչեւ 27 Յուլիս:

Պալապէի փառատօն. «Շիրակ» երաժշտական թատերաստի երկայացում, ժամը 20:00ին, ձիւփիքի տանը:


Նրգահանգէս Շէկի. ժամը 20:00էն սկսեալ, Նահատակացի հրապարակ:

Յուցահանգէս - տօնավաճառ՝ «Փոնուել էլ Պազըրէն», Կեդրոնական Պէյրութ, մինչեւ 10 Յուլիս:

Հայերէն Ալբոմէնի նուիրուած ցուցահանգէս՝ «Ապրող եւ ապրեցող», Մանուկ Հոփալեանի գործերը, «Վարուժան Արթ Սենթըր»-ի մէջ, մինչեւ 7 Օգոստոս:

Յուցահանգէս՝ «Ճոռայրի Լիպան 2003», ՊԻԵԼ, մինչեւ 27 Յուլիս:

ՕՂԵՐԵՒՈՅԹ



ՈՒՐԱԾ, 25 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԶԵՐԵԿ՝ 30°C

ԳԻՇԵՐ՝ 22°C

ՌՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 69%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՋ

25 Յուլիս 1953

ԴՌԱՊԱՆ - ՈՍՏԻԿԱՆ

Թրքական «Տիւնիս» թերթին մէջ Պետի Ֆայիք կը գրէ. -

Ըստ մեր պահովութեան ընդհանուր տնօրէնութեան պատրաստած օրինագրի մը, «Կարթըմ»-ը ներդրուած զոհարարները պիտի ընտրուին յոյնական ոստիկանի օգնական պիտի ըլլան:

Ճիհակի ժողովը մէջ եղբորդիս կը բնակի: Ահարթըմն էր զոհարարը յոյներէն կ'ախորժի, բայց հայերուն թշնամի է: Հիմա այս զոհարարն ալ ոստիկանի օգնական պիտի ըլլայ: Օրինակ, բոլոր հայ վարձակալներուն մասին տեղեկութիւն պիտի տայ պահակազին: Բոլորին կ'ընէ չեմ գիտեր ինչ, իսկ ամուսինները շահադէտ եւ գող: Սիպիլուս ներքին համար կ'ըսէ. «Բոլորը բացու են տել չկարողանալուն համար Հոսմը բանտի վերածեց»: Կ'երեւի՝ մերիցները ամէն տեղ պահակազին պիտի վերածեն, նկատելով, որ բոլորը չեն կրնար պահակազին մտնել:

1897- Խանաթի արշաւանը՝ ընտրու Մարտի ցեղախումբն ղեկավարեց: Ազգայնապաշտան անգամ ըլլալով կ'ընդունի բանակցի Լեւոնյան Գարաբաղի իշխանութիւններուն հետ: Ազգայնապաշտանի պաշտպանութեան փոխ նախարար Մաճա Ապիւնէն Գանակ՝ Արցախի բանակի հրամանատար Սիմոն Բաբայեանը:

ԱՅՍՕՐ 25 ՅՈՒՆԻՍԻՆ

1897- Խանաթի արշաւանը՝ ընտրու Մարտի ցեղախումբն ղեկավարեց: Ազգայնապաշտան անգամ ըլլալով կ'ընդունի բանակցի Լեւոնյան Գարաբաղի իշխանութիւններուն հետ: Ազգայնապաշտանի պաշտպանութեան փոխ նախարար Մաճա Ապիւնէն Գանակ՝ Արցախի բանակի հրամանատար Սիմոն Բաբայեանը:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԸԱՆՔՆԵՐ ԿՈՒՉԵՆ ՏԱՊԱԼԵԼ ԹԵՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ

ԿՐԸՄԵ ՄՈՂԱՏԵՏ ԽԱԹԵՄԻ

Միացեալ Նահանգներ կ'ուզեն տապալել Թեհրանի իսլամական վարչակարգը, «սակայն պէտք է անոնց որեւէ պատրուակ տանք», ըսած է Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի երէկ:

Նախագահը Թեհրանի արեւելքը գտնուող Ֆիրուզքուհի մէջ հապարարուր անձերու խօսելով, Մ. Նահանգներն ու Բրիտանիան ամբաստանած է Իրաքի հաւաքական բնաջնջումը պէտք է դադարեցնելու գծով ստեղծուող արդարացրելու համար իրենց պատերազմը: Ան պնդեց, որ Թեհրանը «մեծ խաղաղութիւն» է, «Ամերիկացիք կ'ուզեն նոյն պատրուակները օգտագործել Իրանի դէմ»:

Ան կ'ակնարկէր ամերիկեան հետեւողական ամբաստանութիւններուն, թէ Իրան կորիզային իր ծրագիրը իրեն ծածկ կ'օգտագործէ՝ կորիզային կենտրոնները մշակելու համար:

Մ. Նահանգներու նախագահ ձորձ Պուշ Երկուշաբթի օր դարձեալ Իրանն ու Մուսլիմ կրօնը շարժեց, թէ պէտք է ապաստան տան եւ օժանդակեն ահաբեկչութեան:

Միւս կողմէ, խաթեմի ջնջած է Պեյճիք նախատեսուած այցելութիւնը, յայտնած է կառավարութեան պաշտօնակատերը երէկ, որոշումը կապելով Երոզական ճնշումներու՝ Իրանի կորիզային ծրագիրին եւ մարդկային իրաւանց առնչութեամբ:



Տեղեկութիւնը պաշտօնապէս չէ հաստատուած, սակայն այցելութիւնը բնաւ այ պաշտօնապէս չէր յայտարարուած Թեհրանի կողմէ: Յուլիս 11ին, Պեյճիքի պետական ծախսափոխարէտը հաղորդած էր, թէ խաթեմի հաւանաբար աշնան Պեյճիք պիտի այցելէ: Լիճի համալսարանէն պատուոյ տոթորա ստանալու համար:

«ԲԱՅԻՍԱ»Ի ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ ԱՆՂԱՍԵՐՈՒ ԳՈՒԿ

Մինչ այդ, դիւանագէտներ երէկ յայտնած են, թէ հակառակ Իրանի մէջ արգելափակուած «Քաշիտա»ի անդամներուն գծով Թեհրանի խոստովանութեան, անկա կրնայ հարցումներ դիմագրաւել՝ անոնց կեցութեան ժամանակամիջոցին եւ այդ գծով ցարդ Թեհրանի լռութեան առնչութեամբ:

Գաղտնի սպասարկութեան նախարար Ալի Եունէի Չորեքշաբթի օր առաջին անգամ ըլլալով յայտարարած էր, թէ Ուսամա Պըն Լատէնի բարձրաստիճան խորհրդականներ կը գտնուին 2001էն ի վեր Իրանի մէջ արգելափակուած «Քաշիտա»ի բազմաթիւ անդամներու կողքին:

«Թալէպաններու տապալումէն ի վեր, «Քաշիտա»ի մեծ թիւով անդամներ ձերբակալուած են: անոնց մէջ մասը արտաքսուած է կամ իրենց ծննդավայր երկրին յանձնուած», ըսած է ան մամլոյ առույտի մը ընթացքին:

Ներքին գործոց նախարար Ապտոյվահէտ Մուսաւի Լարի յայտնած է, թէ արգելափակուածներուն մէջ մասը իրենց ծննդավայր երկրները պիտի ղրկուին, ուրիշներ Իրանի մէջ պիտի դատուին, իսկ մնացեալները պիտի վերադարձուին այն երկրներուն, ուրկէ անոնք Իրան մտած են:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաութը Չորեքշաբթի օր ըսած է, թէ կարեւոր այն է, թէ Իրան ի՞նչ պիտի ընէ այդ արգելափակուածներուն: «Սակայն կը կարծեմ, թէ հետաքրքրական զարգացում մըն է», ակնջուցած է ան:

(ԱՅՓ)

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՀՄՈՒՏ ԱՊՊԱՍ ԱՅՍՕՐ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԵՋ ԿԸ ՏԵՍԱԿՅԻ ՃՈՐՃ ՊՈՒՇԻ ՀԵՏ

Պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս այսօր Սպիտակ Տան մէջ տեսակցութիւն պիտի ունենայ նախագահ ձորձ Պուշի հետ, որ կ'ուզէ նոր ճիգերով յառաջխաղացք մէջ դնել Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը: Ապպասի հետ տեսակցութիւնը առիթ պիտի ընծայէ Պուշի վերահաստատելու քաղաքական զօրակցութիւնը խաղաղութեան գործընթացին: Երեքշաբթի օր ալ, Պուշ պիտի ընդունի այցելութիւնը Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի:



Ապպաս իր կարգին, մեծ կարեւորութիւն կու տայ այս այցելութեան, որովհետեւ անոր արդիւնքին կրնայ կախել ըլլալ քաղաքական իր ապագան: Պաղեստինցի տեղեկատուութեան նախարար Նապիլ Ամր ըսած էր, որ Ապպասի ապագան պիտի վտանգուի, եթէ չկարենայ համոզել Ռաշիմկընը, որ ճնշում բանեցնէ Իսրայէլի վրայ, ինչպէս նաեւ արագացնէ խաղաղութեան ճամբը քարտէսի գործադրութիւնը: Ամր դիտել տուած էր նաեւ, որ եթէ Ապպաս ձախողի, դժուար կացութիւն մը պիտի դիմագրաւէ պաղեստինցի ժողովուրդին եւ խորհրդարանին դիմաց:

Ապպաս Ռաշիմկընէն պիտի պահանջէ ճնշում բանեցնել Իսրայէլի վրայ, որպէսզի անկա կիրարկէ իր խոստումներն ու յանձնառութիւնները, զորս յայտարարած էր Արապայի վեհաժողովին: Ապպաս պիտի պահանջէ նաեւ, որ Իսրայէլ ապստամբութեան պաղեստինցի բոլոր բանտարկուելները:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու եւ Իսրայէլի արտաքին գործոց նախարարները՝ Քոլին Փաութը եւ Միլիվան Շայում կը ուղղեցին պաղեստինեան իշխանութեան յանձնարարութեանը ու վճռակամութեանը գործելու ահաբեկչական շարժումներուն դէմ: Շայում ըսաւ, որ ծամանակը հասած է, որպէսզի պաղեստինցիները ռազմագիտական որոշում մը տան՝ անդամալուծելով ծայրայեղական շարժումները: Ան ակնջուց, որ ծայրայեղականներուն պէտք է արտօնուի ոմբահարել խաղաղութեան գործընթացը:

Շայում եւ Փաութը սակայն տարակարծիք կը մնան Այսրլորդանանի եւ Իսրայէլի միջեւ կառուցող ապահովական պարսպին մասին: Շայում փորձեց մեղմացնել տարակարծութեան պարոտութիւնը, դիտել տալով, որ ամերիկացիներուն մօտ հասկացողութեան թիրախացումները մը գոյություն ունի: Ան ըսաւ, որ ամերիկացիները չեն գիտակցիր, թէ ինչ ու կը կառուցուի պարսպը: Շայում ակնջուց, որ պարսպը կը կառուցուի պարսպապէս կանխարգիլելու համար ահաբեկչական գործողութիւնները: Ան ըսաւ նաեւ, որ նոյն ձեւի պարսպ մը արդէն իսկ գոյութիւն ունի Կապայի շուրջ:

- ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ուժեր Իսլամական փիլիսոփայութեան բարձրաստիճան պատասխանատու մը ձերբակալեցին Այսրլորդանանի Ֆահմա գիւղին մէջ: Իսլամական փիլիսոփայութեան, որ այսպիսի արարքներ կը սպառնան Կիւստալիին:
- ԻՍՐԱՅԷԼԱՅԻ սահմանապահ զինուոր մը սպաննեց պետեի մը, որ պաղեստինցի ապօրինի գործաւորներ կը փոխադրէր իր ինքնաշարժով Իսրայէլի հարաւային շրջանին մէջ:

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՏԵՂԻ ՏՈՒԱԿ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒՆ

ԹԻՖԼԻՍ, 24 (ԱՅՓ).- Վրաստանի խորհրդարանը Չորեքշաբթի գիշեր տեղի տուած է ամերիկեան ճնշումներուն եւ առաջին իսկ ընթացքում իսկ վաւերացուած է ընտրական նոր օրէնք մը, որ երկրին ընտրական կեդրոնական յանձնարարութեան վրայ իշխանութիւններուն ազդեցութիւնը կը նսեմացնէ:

Մ. Նահանգներու նախագահ ձորձ Պուշ այս ամսուան սկիզբը Վրաստան ղրկած է պատուիրակ մը, որ կառավարութեան յանձնած է ծրագիր մը, ըստ որուն՝ ընտրական կեդրոնական յանձնարարութեան պէտք է ընդգրկէ 9 անդամ եւ իշխող կուսակցութեան 5 անդամներ:

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ մեթոժ էր օրէնքը որեւէ փոփոխութեան ենթարկել՝ Հակառակ ժողովրդային մեծ բողոքներուն, սակայն ան նաեւ Ուաշինկթընի Հետ առելի սերտ կապեր կը Հետապնդէ՝ Ռուսիոյ ազդեցութիւնը նուազեցնելու նպատակով:

Խորհրդարանը գերոյի դէմ 123 քուէներով վաւերացուցած է օրինագիծը, մինչ ճանաչելով 65 ընդդիմադիր երեսփոխանները իբրեւ բողոք՝ դուրս ելած են քուէարկութեան ընթացքին:

Ընդդիմադիր երկու կուսակցութիւններէ երեսփոխաններ յայտնած են, թէ կ'ուզեն իւրաքանչիւր երկու անդամ ունենալ յանձնարարութեան մէջ: Ամերիկեան ծրագիրը երկրին ընդդիմադիր 9 կուսակցութիւններուն իւրաքանչիւրէն մէկ անդամ կը նախատեսէ:

Նախկին օրէնքին Համաձայն, Շեւարտնաձէ կը նշանակէր կեդրոնական յանձնարարութեան նախագահը, իսկ անոր անդամներուն մեծամասնութիւնը կու գար իշխող կուսակցութեանէն:

Խորհրդարանը օրինագիծը պիտի քննարկէ յաւելեալ երկու ընթացքումներու ընթացքին: Անոնց յատկացուելիք նիստերուն թուականները չեն ճշգրտուած:

ՌԻՏԱՅԻ ԵՒ ԲՈՒՍԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

նու առաջին գործողութիւնը տեղի ունեցաւ երէկ Մուսուլի մէջ (հոս ուր սպաննուած էին Մատուամի տղաքը), ուր փնտրուեց թակարդի մը մէջ առնուեցան՝ երեք յոռ տալով: Սպաննուած ու վիրաւորուած փնտրուեցին կը պատկանէին այն զօրամասին, որ գործած էր յարձակումը Ռուսիոյ եւ Քուսայի դէմ:

Երկու իրաքցիները այ սպաննուեցան Պաղեստին մէջ, երբ ամերիկացի փնտրուներ կրակ բացին անոնց ինքնաշարժին վրայ՝ զայն հորդ ճարակ դարձնելով, յայտնեցին ակնատեսները: Ինքնաշարժին վարորդը մերձած էր կանգ առնել ամերիկեան անցարգելի մը վրայ, ակնջուցին ակնատեսները: Ուրիշներ ըսին, որ երկու փոհերը «Մատուամի ֆետայիներ» էին:

18 ԱՄՍԻԵՆ ԻՐԱԸ ԻՆԵՆԻՇԻԱՆ ՊԻՏԻ ՂԱՆԱՅ

Իշխող խորհուրդի անդամ Ատնան Պաշաշի յայտարարեց, որ Իրաք ինքնիշխան պիտի դառնայ առաւելագոյն 18 ամսուան մէջ: Պաշաշի. որ Լոնտոնի մէջ տեսակցութիւններ ունեցած էր արտաքին գործոց նախարար ձէք Սթրոյնի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ, ըսաւ, որ իշխող խորհուրդին թիրաքն է կարելի եղած չափով կրճատել փոխացման հանգրուանը: Հասնելու համար այս թիրաքին, հարկ է ունենալ սահմանադրութիւն եւ ապա ընտրութիւններ, որոնք պէտք է իրականանան յառաջիկայ մէկուկէ տարուան մէջ, ակնջուց Պաշաշի:

Պաշաշի շեշտեց նաեւ, որ նախկին վարչակարգը պիտի չվերադառնայ եւ թէ այս հաստատուելու յաւագոյն փաստը Ռուսիոյ եւ Քուսայի սպանութիւնն է:

Իշխող խորհուրդի մէկ այլ անդամը՝ Մոհամէտ Պաիր Ուլում նախատեսեց, որ նախարարները նշանակուին յառաջիկայ երկու շաբթուան մէջ: ● ԻՐԱՅԻ ԵՐԼՈՒՆ ԵՒ ԵՂԵՂԵՆՈՒ ՊԵՏՐՈՒ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԻՍԿԱՔ ՓԱՔ ՐԱՍԱՆ, որ Ռուսիոյ եւ Քուսայի սպանութիւնը որեւէ բան պիտի չփոխէ Իրաքի մէջ: ● ԹՈՒՐԿԻԱՅԻ ՄԱՐՏԻՆԵԱՆ ԳՈՐԾՈՅՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՊՏՈՒՂԱԿ ԻՐԱՍԱՆ, որ Իրաք փնտրու ուղարկելու ամերիկեան առաջարկի մը ընդունաւ չէ անաջ, Անգարա պիտի ուզէ մեծ դերակատարութիւն ունենալ Իրաքի վերակառուցման աշխատանքին մէջ:

(ԱՅՓ)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Շարունակուած Չոր ԷջԵԳ

րոյի սենտիքայի խորհուրդն ու անոր Պաթրուի հիւանդանոցի աշխատուորներու սենտիքան:

Անոնք նկատել տուին, որ ապահովագրութիւնը կը կապէ երկրին տնտեսութեան հիւր:

● ՎՐԱՅՊՏ ՌԱՖԻԿ Վարի Երէկ Քորայթեմի մէջ տուաւ ճաշկերոյթ մը ի պատիւ Լիբանան գտնուող արաբական երկիրներու նախարարական յանձնարարութեան, որոնք կը պատրաստեն առեւտրի համաշխարհային կապակերպութեան նախարարական Ե. վեհաժողովին առնչուող թղթածրարը: Նշենք, որ նշեալ վեհաժողովը պիտի կատարուի Պէյրութի մէջ:

Ճաշկերոյթին ընթացքին, վարչապետ Հարիւրին ներկայացուց փոխ վարչապետ Իսամ Ֆարէս: Ներկայ գտնուեցան նաեւ երեսփոխան Պասէլ Ճիշիան, իրանական տարածքային գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նաւրի Սուրի, դեսպաններ, ինչպէս նաեւ բարձրաստիճան այլ անձնատարութիւններ:

● ՆԵՐՔԻՆ գործոց եւ քաղաքացիական պաշտօնատար նախարար Էլիաս Մըր երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆրիլիք Լը Բուրթիէ, որուն հետ քննարկեց Լիբանանն ու Ֆրանսան յուզող քաղաքական եւ ապահովական հարցեր:



● ՏԵՂԵԿԱՍՈՒԹԵԱՆ նախարար Միշէլ Արմահա երէկ շնորհակալութիւն յայտնեց «Եռուսայթթ Փրէս Ինթըրնէշնըլ»-ի ցուցաբերած գործակցութեան եւ օժանդակութեան համար, որոնց շնորհիւ Լիբանանի ապգային լրատու գործակալութիւնը երէկուրէն սկսեալ պաշտօնապէս մաս կապմեց այն լրատու գործակալութիւններու շարքին, որոնք կ'օգտուին «Արապիա 2000»-ի մատուցած ծառայութիւններէն:

Արմահա շեշտեց, որ Լիբանանի մէջ ապատութիւնները յարգուած են նոյնիսկ եթէ ժողովրդավարութիւնը ամբողջովին ներկայ չէ:

● ՄՇԱԿԱՅԻ նախարար Ղապի Արիտի հովանաւորութեամբ երէկ ԵՌՆԵՍՔՕԻ մէջ տեղի ունեցաւ լուսակարներու ցուցահանդէս մը, նուիրուած Սէլուական Արաբիոյ:

Յուզահանդէսին, Արիտի կողքին ներկայ գտնուեցան Լիբանանի մէջ Սէլուական Արաբիոյ դեսպանատան գործավար Ապտէլ Ռահման Խալաթ, ինչպէս նաեւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներ:

Արիտի իր խօսքին մէջ շեշտեց արաբական միասնականութեան անհրաժեշտութիւնը:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Ալի Օսէյրան երէկ նկատել տուաւ, որ Լիբանանի տնտեսական կացութիւնը անկայուն է եւ վատահունձ է «ինքնաբերկ» քաղաքականութեան մը, ինչ որ պատճառ կը դառնայ քաղաքացիին կրելու տուրքերու ծանր բեռի մը տակ: